ԵՒ «AKSAM»Ի ԻՐԱԿԱՐԱԿԱԳԻՐԸ ԱՅԼԵՍ ԴԴՈՒՄԻ ԿԱՄ ՍՈՒՈՂ ԹՐՔԱԿԱՆ ՔԱՐՈՂ-
 ՋՈՒԹԻՆԸ ԿԸ ԿՐԿՆԷ՝
 «Ցեղասպանութիւն չէ եղած... ... Կարդացէք փրօֆէսորներ՝ STANFORD
 SHOW-ի և BERNARD LEWIS-ի գիրքերը...»:
 Բայց այսօր, թուրքերն անգամ գիտեն թէ՛ STANFORD SHOW և BER-
 NARD LEWIS թրքական կառավարութեան կողմէ վճարուող պատմագէտներ են...:



Բնական է, որ 1915-ի հայկական ցեղասպանութեան յանցագործներէն ճեմալ Փա-
 շային թողը՝ հասան ճեմալ-ին հայ ազգէն ներողութիւն խնդրելը և երեւանի եղեռնի
 Յուշարձանին ծաղիկ տանիլն ու յարգանքի տուրք մատուցանելը՝ հայերուն գոհունա-
 կութիւն կը պատճառեն:
 Բայց ինչի՞ կը ծառայեն...:
 Հասան ճեմալ-ի անուշ խօսքերը՝ հայերուն կ'ուրախացնեն. կը թմրեցնեն և կը
 քնացնեն...:
 Եւ հայերը թուրքիոյ վարչապետ Էրտողանին խօսքերը չեն իմանար, ... չեն գի-
 տեր... և չեն հասկնար...:
 Թուրքիոյ «Տօն Քիշօթ» վարչապետը 25 Յունուար 2011-ին, Սթրազպուրկի մէջ
 կատարած ելոյթի ընթացքին, «Թուրքիոյ պատմութեան մէջ ցեղասպանութիւն չէ կա-
 տարուած» ըսած էր...:
 ... Այս չէր բաւեր... մեծամոլութեան հիւանդութենէ վարակուած վարչապետ Էր-
 տողանը, երկու օր առաջ, 13 Ապրիլ 2011-ին Սթրազպուրկի երրօրեակն ժողովասրա-
 հին մէջ ունեցած ելոյթին ընթացքին, իր ոչ միայն Օսմանցի, այլ նաե՛ւ թուրանական

և ֆաշիստ ըլլալն ալ ապացուցանեց ըսելով.

«Մենք բարեկամ և եղբայր Ատրպայձանական ժողովուրդին իրաւունքը և օրէնսգիտութիւնը հայերուն չենք կրնար կերցնել:

Այսինքն՝ էրտողան ըսել կ'ուզէր թէ՛ «Արցախին՝ հայոց տրուելուն արգելք պիտի ըլլանք»:

Բայց, իրականութեան մէջ, իր միտք բանին հետեւեալն է...—

«Ազերիներուն 1988-ին Պաքուի և Սումկայիթի մէջ ըրածնուն նման, առաջին առթիւ իսկ, Արցախի հայերը մաքրագործելու համար, անոնց պիտի օգնենք»:



Էրտողան Պէյ՝ Ազերիները ուրկէ՛ ուր ձեր եղբայրները կ'ըլլան եղեր...:

Անաթուլիոյ ժողովուրդին 99 առ հարիւրը [ADN-ի կատարուած քննութիւններու արդիւնքներուն համեմատ] Թուրք-Թուրանական ծագում չունին:

Օսմանցիներն անգամ, մինչեւ սա վերջին շրջանները, կովկասէն եկողներուն իրենցմէ ըլլալը չէին ընդունիր: Եւ անոնց «Թաթար» կ'որակէին...:

Եթէ համարձակութիւն ունիք՝ ADN-ի քննութիւն կատարեցէք որ տեսնենք, թէ Լա՞զ էք, Քի՞ւրտ էք, և կամ Նա՞յ էք... հասկնա՛նք:



Էրտողան պէյ, ձեզի բան մը ըսե՛նք.

Դուք ձեր «Քթին առջեւը» անգամ չտեսնող իսկական «Տօն Քիշոթ» մըն էք:

Անաթուլիոյ ժողովուրդը, ցեղապաշտ և ֆաշական կարգախօսներ կրող և ամէն առաւօտ դպրոցներուն մէջ աշակերտներուն Ձեր կլլեցուցած»ին նման՝ «Թուրք եմ, Պարկեշտ եմ»-ի ծաբոտութիւններուն այլեւս չի հաւատար:

Անաթուլիոյ մէջ, բռնութեամբ թրքացուած բոլոր ազգաբնակչութիւնները՝ Քիւրտերը, Լազերը, Նայերը և Ասորիները, այլեւս իրենց արմատներուն վերադառնալ կ'ուզեն:

Արդէն, այս ուղղութեամբ, առաջին քայլը նետուեցաւ:

Հիւսիսային Իրաքի մէջ, ինքնավար Քրտական պետութիւն մը հիմնուեցաւ:

Եւ հիմա կարգը եկաւ՝ Անաթուլիոյ մէջ և Պոլսոյ շրջակայքը գտնուող 30 միլիոննոց քիւրտերուն...:

Էրտողան Պէյ՝ Անաթուլիան ծարձատիլ սկսած է:

Իսկ դուք «Մեծ Թուրան»ի երազներ կը տեսնէք:

Ուշադրութիւն ըրէք՝

Ճարձատիլ սկսող Անաթուլիոյ աւերակներուն տակ Պիտի Ճզմուիք...:


Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն


Ռուբէն Սեւակի գաղափարականը և անձնագործութեան ոգին հայ ժողովուրդին մէջ տարածելու նպատակաւ, NICE-ի «Ռուբէն Սեւակի Յիշատակի Տուն»ը 1915 թուականի Հայոց Յեղասպանութեան 95-ամեակին ձօնուած չորս պատմական սկաւառակներ հրատարակած է:

Այս չորս տեսասկաւառակները սիրով կը նուիրուին՝ ունենալ փափաքող եկեղեցիներուն մշակութային միութիւններուն, դպրոցներուն և միօրեայ վարժարաններուն:

Դիմումները ուղարկել հետեւեալ հասցէին՝

REVUE HEBDOMADAIRE «NAIRI»
B. O. BOX. 113-5186 BEYROUTH - LIBAN
 Email: nairi2002@hotmail.com





Այս տեսերիզը կը ձօնուի նահատակ բանաստեղծ
Ռուբեն Սեւակի 125-ամեակին
Ռուբեն Սեւակի Յիշատակի Տան կողմէ



Տ. Պ. Պ. Չ/Լ. Մ. Կ.

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ

1885 - 1915

Պերոս, 23 Ապրիլ 1994

Հ.Կ.Բ.Մ.Ի Սահակեան - Լ. Սևոտիչեան Գոլժի մը

Նահատակ Բանաստեղծ Ռուբեն Սեւակի անուան
Մատենադարանի բացման հանդիսութիւն

Բարձր հովանաւորութեամբ՝
Լ.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կարողիկոսի
Սեօի Տանն Կիլիկիոյ

Բարերարութեամբ՝
Ռուբեն Սեւակի Յիշատակի Տան, Նիս (Ֆրանսա)

Տրամադրելի են հետևեալ սկաւառակները.-

1.- DVD- 1985-թ.ին, Նիսի մէջ, Ռուբէն Սեւակի 110-ամեակի հանդիսութիւնը, նախագահութեամբ՝ Անդրանիկ Ծառուկեանի:

2.- DVD- 1987-ին, Երեւանի հեռուստատեսիլէն Ռուբէն Սեւակի մասին յայտագիր. Ալեքսանդր և Անահիտ Թօփչեաններու կատարողութեամբ:

3.- DVD- 1994-թ.ին. Պէյրութի Սահակեան Գոլէճի մէջ, Ռուբէն Սեւակի անուան մատենադարանի բացման հանդիսութիւն. Բարձր Հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի, Մեծի Տանն Կիլիկիոյ:

4.- DVD- 2006-թ.ին. 91 տարիներէ ի վեր առաջին անգամ ըլլալով՝ Ուխտագնացութիւն դէպի Չանղըրը և Այաշ:



**Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ա Կ Ա Ն Պ Ա Տ Ա Ր Ա Գ
Ս . Զ Ա Տ Կ ՈՒ Ա Ն
Տ Օ Ն Ի Ն Ա Ռ Ի Թ Ո Վ**

Կիրակի, 24 Ապրիլ 2011-ին, մեր Տիրոջ և Փրկիչին հրաշափառ Ս. Յարութեան տօնին առիթով Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պիտի պատարագէ և իր հայրապետական պատգամը տայ՝

**Ն Ս Օ Տ Տ Ա Ր Ա Մ Ա . Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս
Մ Ե Ծ Ի Տ Ա Ն Ն Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ**

Ս. պատարագի քառամսյան երգեցողութիւնը պիտի կատարուի կաթողիկոսարանիս «Շնորհալի» երգչախումբին կողմէ՝ ղեկավարութեամբ

**Հ Ո Գ Շ . Տ . Թ Ո Ր Գ Ո Մ Վ Ր Դ .
Տ Օ Ն Ո Յ Ե Ա Ն Ի**

Սկիզբ ժամերգութեան՝

ժամը 8:00-ին

Սկիզբ Ս. պատարագի՝

ժամը 10:00-ին

Հայրապետական պատգամ՝

ժամը 11:00-ին

Սիրով կը հրաւիրենք մեր ժողովուրդի զաւակները՝ ներկայ գտնուելու սուրբ և անմահ պատարագին, լսելու վեհափառ հայրապետին պատգամը և վերանորոգուելու Ս. Յարութեան հրաշագարդ խորհուրդով:

ԾԱՆՕԹ.- Նկատի ունենալով, որ այս տարի Ս. Զատիկը կը զուգահիսի Ապրիլ 24-ին՝ իբրեւ յարգանքի արտայայտութիւն Ցեղասպանութեան զոհ մեր մէկուկէս միլիոն նահատակներուն, վեհափառ հայրապետը որոշած է այս տարի զատկական շնորհաւորութիւնները ջնջել:

ԴԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

**Կ Ա Ր Գ Ո Տ Ն Լ ՈՒ Ա Յ Ի
Ա Ն Թ Ի Լ Ի Ա Ս Ի
Մ Ա Յ Ր Տ Ա Ճ Ա Ր Ի Ե
Մ Է Ջ**

Աւագ Հինգշաբթի, 21 Ապրիլ 2011-ի երեկոյեան ժամը 4:00-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ տեղի պիտի ունենայ Ռտնլուայի արարողութիւնը, զոր պիտի կատարէ և իր հայրապետական պատգամը ուղղէ՝

**Ն Ս Օ Տ Տ
Ա Ր Ա Մ Ա . Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս
Մ Ե Ծ Ի Տ Ա Ն Ն
Կ Ի Լ Ի Կ Ի Ո Յ**

Կը հրաւիրենք մեր ժողովուրդի բոլոր զաւակները մասնակից դառնալու հոգեպարար արարողութեան, լսելու վեհափառ հայրապետին պատգամը և հաղորդուելու օրուան դաստիարակիչ խորհուրդով:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 7:00-ին, Մայր տաճարին մէջ պիտի կատարուի Խաչելութեան կարգը, Խաւարման գիշերը՝ վեհափառ հայրապետին հանդիսապետութեամբ:

ԴԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԱՌ Ի ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ
ՀՀ. ՍՓԻՒՌԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ
Հ.Հ. ՄՇԱԿՈՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ
Մ. ԱԲԵՂԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
 [ԿՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

Ինչպես որ շատերուն ծանօթ է՝ 2010 տարեթիւը Ռուբէն Սեւակի ծննդեան 125 ամեակն է:

Եւ Հայաստանի մէջ 2010-թ.ին, Ռուբէն Սեւակի 125 ամեակը, առաջին անգամ ըլլալով, պետական մակարդակով և մեծ շուքով նշուեցաւ:

Եւ ուրախութեամբ պիտի ըսենք, որ կարգադիր յանձնախումբին ծրագրին գրեթէ մեծ մասը իրագործուեցաւ:

2010-թ.ի վերջին ամիսներուն, Հայաստանի հեռատեսիլը դիտողները, անպայման հետեւած են Ռուբէն Սեւակի 125-ամեակի հանդիսութիւններուն:

Այստեղ հաճոյքը ունինք տեղեկացնելու, թէ Հայաստանի Հանրապետութեան թղթատարութիւնը՝ «Հայ Փոստ»ը Ռուբէն Սեւակի յիշատակին դրոշմաթուղթեր հրապարակ հանած է:

Փետրուար 2011-թ.ին լոյս տեսած այս դրոշմաթուղթերով, «Հայ Փոստ»ը հանրութեան կը ներկայացնէ, հայերէն և անգլերէն մակագրութիւններով, Ռ. Սեւակի կեանքը. իսկ ամենէն կարեւորը՝ գնահատած է նահատակին ունեցած կեցուածքը Չանդըրը-ի մէջ:

Այստեղ կը հրատարակենք Ռուբէն Սեւակի յիշատակին լոյս տեսած դրոշմաթուղթերուն նկարները և մանաւանդ՝ անոնց կցուած գրութիւնները...

Ռուբէն Սեւակ (Ռուբէն Չիլինկիրեան), Հայ մեծ բանաստեղծ, հրապարակախօս, բժիշկ: Ծնուել է 1885-թ. Կոստանդնուպոլսից քիչ հեռու գտնուող Սիլիւրի գիւղաքաղաքում: 1006 - 1911-թ.ին ուսանել է Լոզանի համալսարանում, այնուհետև աշխատել տեղի հիւանդանոցներից մէկում: 1914-թ.ին վերադարձել է Կ. Պոլիս, մէկ տարի անց ձերբակալուել և աքսորուել է Չանդըրը քաղաքը, ուր արդէն բազմաթիւ աքսորեալ հայ մտաւորականներ կային: Այստեղ նա շարունակել է իր բժշկական գործունէութիւնը:

Նրա հիւանդների թւում էր յայտնուել քաղաքի երեւելիներից մէկի տասնութամեայ աղջիկը, որը սիրահարուել է իր գեղեցկատես փրկչին: Հայրը ցանկանալով երախտահատոյց լինել, առաջարկել է իսլամ ընդունել, ամուսնանալ իր դստեր հետ և այդպիսով փրկուել անխուսափելի մահից: Հրաման կայ Պոլսից, - ասել է նա - : Ձեզ բոլորիդ պիտի սպանենք: Ռ. Սեւակը հրաժարուում է ուրանալ իր քրիստոնէական հաւատը և 1915-թ. Օգոստոսի 26-ին տանջամահ արւում:

Ruben Sevak (Ruben Chilinkiryan), a great Armenian writer, publicist and doctor was born in Siliuri village, not far from Constantinople, in 1885. In 1905-1911 he studied at the University of Lausanne, and after was employed by one of the local hospitals. In 1914 he returned to Constantinople, a year later was arrested by the Turk Government and exiled to Changra City, where there were already numerous Armenian Intellectuals in exile. There he continued his medical activity.

ՌԱԲԵԼ ՍԵՎԱԿ
RUBEN SEVAK

ՀԱՅՍՏԱՆ
ARMENIA



ՀԱՅՍՏԱՆ

ARMENIA

ՆՈՐ ԹՈՂԱՐԿՈՒՄ 02.02.2011
NEW ISSUE 02.02.2011



ՔԱՆԴՈՒ ԽԱՄԱՐ

Որտե՞ղ
«Ֆիլատելիտական անկյուն»
խանութ-սրահում
Բնակիչ
Լալբանդյան 78
Երևան
Սկսած փետրվարի 2-ից

To purchase

Where?
"Philatelic corner" shop
Address
28 Nalbandyan str.
When?
Starting February 2

Տպագրություն
Տպագրող
Պատկեր
Տպագրողի անուն
Մեծ թիվը
Արժեքը
Տպագրություն


Արժեքը
Տպագրող
Պատկեր
Տպագրողի անուն
Մեծ թիվը
Արժեքը
Տպագրություն

ՀԱՅՍՏԱՆ
ARMENIA
www.armenianphilatelystamps.com

In Changra, an eighteen year girl, a daughter of one of the municipal elders, fell in love with him, her attractive recuer, and her father, as a sign of gratitude, suggested him to adopt Islam, marry his daughter and be saved from the inevitable death. «There is an order from Constantinople» he said, «We must kill all of you». R. Sevak refused to renounce his Christian belief, and in August of 1915 he was severely tortured and killed.

Ծ.Մ. Ծանօթագրութիւնը [հայերէն ու անգլերէն] վերցուած է Հ.Հ.-ի «Հայփօսթ»-ի կողմէ և Ռուբէն Սեւակի յիշատակին «Թողարկուած» նամակի պահարանին վրայէն:

Այստեղ ուրախութիւնը ունինք նշելու, թէ Ռուբէն Սեւակի Չանղըրը-ի մէջ ապրած հերոսական կեանքի պատմութիւնը, այլեւս Հայաստանի ժողովուրդի լայն խաւերուն մէջ, Վարդանանց հերոսներուն դիւցազնապատումին նման, իրացուած է:



Ահա, Հայաստանի մէջ լոյս տեսած գրութեան ամէնէն կարեւոր նախադասութիւնները՝ հայերէնով և անգլերէնով.

«Ռ. Սեւակ հրաժարոււմ է ուրանալ իր քրիստոնէական հաւատքը և 1915-թ. Օգոստոսի 26-ին տանջամահ արոււմ»:

«R.SEVAK REFUSED TO RENOUNCE HIS CHRISTIAN BELIEF AND IN AUGUST OF 1915 HE WAS TORTURED AND KILLED»

* * *

Այստեղ կ'ուզենք յատկապէս շնորհակալութիւն յայտնել Հ.Հ. Սփիւռքի Նախարարուհի Հրանուշ Յակոբեանին, որ Ռուբէն Սեւակի յիշատակին կատարուած բոլոր հանդիսութիւններուն ներկայ եղած և ելոյթներ ունեցած է:

Եւ վերջապէս՝ մեր անկեղծ շնորհակալութիւնները՝ 125-ամեակի հանդիսութիւններուն մղիչ ուժեր եղող Ալեքսանտր Թօփչեանին ու Անահիտ Թօփչեանին:

* * *

1995-թ.ի «Նայիրի»ի առաջին թիւերէն սկսեալ և մինչեւ այսօր՝ «Նայիրի» թերթի վերջին թիւերուն մէջ, Ռուբէն Սեւակի իսկական, հերոսական կեանքի պատմութիւնը տալու ջանացինք:

Յաւով պիտի ըսենք որ մինչեւ այսօր, Ռուբէն Սեւակի մասին այս գրութիւնները, գիրքի ձեւով դեռ չհրատարակուեցան....:

* * *

Այստեղ կ'ուզենք նշել, Ռուբէն Սեւակի Չանդըրըի հերոսական կեանքին վերաբերող շատ կարեւոր հատուած մը....:

Ռուբէն Սեւակի Չանդըրը-ի մէջ ապրած կեանքի այս դրուագը, «Ռ. Սեւակի թրքանալը մերժելուն» չափ կարեւոր կը նկատենք:

Ինչո՞ւ Ռ. Սեւակի Չանդըրը-ի կեանքի այս շատ կարեւոր բաժինը, պէտք եղածին պէս շատերուն ծանօթ չէ:

Հակառակ որ այս մասին, «Նայիրի»ի մէջ, 11 Փետրուար 2005-ին, բոլոր մանրամասնութիւններով գրած էինք...

Եթէ վարի տողերը ուշադրութեամբ կարդաք, պիտի ճիշդ հասկնաք իրականութիւնը:

Այստեղ նախ պիտի նշենք Չանդըրը-ի սպանդանոցէն վերապրող Յովհան Կրդ. Կարապետեանի ականատեսի վկայութիւնները, որոնք լոյս տեսած են 7 Յունուար 1922-թ.ի «Հայաստանի Կոչնակ»ին մէջ [Ա.Մ.Ն.]:

«ԱԶՍՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՓՈՐՉԱՔԱՐ ՄԸՆ ԷՐ ԱՐԺԱՆԻՔՆԵՐՈՒ: ԱՄԷՆ ԱՆՉ Ի ՅԱՅՏ ԿՈՒ ԳԱՐ ԻՍԿԱԿԱՆ ԻՐ ԳՈՅՆՈՎ»:

Ոմանց համբաւին պատուանդանը կը գայթեր անդարձ, մինչ ուրիշներ նոր կը կերտէին կոթողները առինքնող հիացման: Փոխադարձ գնահատումի այս առիթը կ'առաջնորդէր կազմութեանը բարեկամութեանց լաւագոյններուն: Տառապանքով նուիրագործուած այս եղբայրակցութիւնները տաճարներ էին մխիթարութեան ուր հաւատք, յոյս և սէր կը բոցավառէին լուսաճաճանչ՝ կարծես իբր հակապատկերներ մթնոլորտը պատող անարդարութեան խաւարին:

Քաղցր էր արդարեւ ցորեկը բոլորուիլ ծառերու հովանիին տակ և խրախուսել գիրար: Մինչ գիշերը անքուն ժամեր կ'օգտագործուէին, կացութեան մասին աւելի լուրջ վերլուծումներով:

Անգամ մը՝ հազիւ շաբաթ մը ետք այն տեսակցութենէ որուն անդրադարձայ՝ երբ նստած էի Չանդըրըի հանդիպակած բլրակներուն բացուող պատուհանիս առջեւ, ու կը մտածէի զիս կախելու այն սպառնալիքին վրայ որ նոյն առտուն՝ ներկայութեան պարտաւորիչ արձանագրութեան համար ոստիկանատուն գացած միջոցիս ըրած էին շուկային մէջ երկու անգուսպ թուրքեր, յանկարծ սենեակ մտաւ Տօքթ. Չիլինկիրեան:

Սովորականէն աւելի մոայլ էր կերպարանքը: «Առաջարկ մը ունիմ

(→ 3)

ԱՌ Ի ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ... (Շար. էջ 2-էն)

ընելիք»- յայտարարեց, առանց յառաջընթաց խօսքերու: «Կը լսեմ, թէ Գաղատիոյ կողմերը իսլամացած են կարգ մը հայեր: Չեմ ուզեր որ մեր ընկերներէն ոեւէ մէկը այդպիսի տկարացում ունենայ ապագայ հաւանական ճնշումներու առջեւ. ուստի կը թելադրեմ որ դուն, իբր հոգեւորական, կանչես հոս գտնուողները և երդում առնես իւրաքանչիւրէն, թէ հաստատ պիտի պահեն քրիստոնէական հաւատքնին»:

Չանացի հանդարտեցնել Տօքթորը և բացատրեցի անպատեհութիւնները որ կային այդօրինակ արարողութեան մէջ, նկատի ունենալով մանաւանդ ժամանակին փափկութիւնը և մեր ընկերները անհարկի յուզման չմատնելու անհրաժեշտութիւնը: Համակերպեցաւ չպնդել իր տեսակէտին վրայ, և սակայն, այդ միջադէպը կարծես կանխաձայնութիւն մըն էր մօտալուտ սարսափներու»:

ՅՈՎՆԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Ինչպէս որ, վերի տողերուն մէջ, դուք ալ նկատեցիք՝ Ռուբէն Սեւակ կասկած ունեցած էր, թէ իր մտաւորական ընկերներէն ոմանք կրնան թրքական ծուղակը իյնալ...:

Եւ իրենց կեանքը փրկելու համար... թրքանալը ընդունիլ...:
Այս պատճառաւ նախ կը դիմէ իր բարեկամին՝ Յովհան Վրդ. Կարապետեանին, որ երդում առնէ իւրաքանչիւրէն, թէ հաստատ պիտի պահեն քրիստոնէական հաւատքնին»:

* * *

Ռուբէն Սեւակ թրքանալու կանխազգուած այդ վտանգին դէմ, իր բարեկամ վարդապետին տուած գրեթէ խուսափողական պատասխանէն յետոյ ի՞նչ կ'ընէ:

Կը գոհանա՞յ Յովհան վրդ. Կարապետեանին տրուած բացատրութիւններով:

- Ոչ...
- Ընդհակառակը...

«... Եւ երդում ընել կուտայ բոլոր՝ անոնց, որոնց հոգիի ուժին վրայ կասկած ունէր»:

Այստեղ կը հրատարակենք Չանդըրը-ի սպանդանոցէն վերապրող ուրիշ մէկ ականատեսի՝ Միքայէլ Շամտանճեանի վկայութիւնները, որ նախ 1919-թ.ին Պոլսոյ մէջ, «Ապրիլ տասնըմէկի սգահանդէսի Յանձնախումբին կողմէ... և յետոյ, Թէոդիկի «Յուշարձան Նահատակ Մտաւորականութեան» գիրքին մէջ հրատարակուեցան:

**ՉԱՆՂԸՐԸ ԱԶՍՈՐՈՒԱԾ ԵՒ ՎԵՐԱՊՈՂ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ
ՄԻՔԱՅԷԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ...
ՉԱՆՂԸՐԷՆ ՎԵՐՅԻՇՈՒՄՆԵՐ**

«Այն երեք զոհերը, որոնց հետ անձնական շատ մը յիշատակներով կապուած եմ, և որոնց եղերական վախճանը միշտ սրտիս մէջ կ'արիւնի, եղած են՝ Դանիէլ Վարուժան, Տիրան Զէլէկեան և Ռուբէն Սեւակ:

1915 Յունիսի վերջերը, առաջին կարաւանին մեկնելէն և տասնևինը հոգիներու ալ Պոլիս վերադարձը արտօնուելէ յետոյ, մեկուկէս ամիսի չափ, միասին ապրեցայ Սեւակին հետ:

Ես, ուրիշ վեց հոգիներու հետ, միասին կ'ապրէի: Բոլոր ընկերներս ալ, առանց բացառութեան, մաս կը կազմէին Պոլիս վերադառնալու արտօնուածներուն: Սեւակ ալ, այդ օրերուն, նոր հասած էր Չանղըրը: Ուրեմն, անմիջապէս, որոշեցինք մեր կենակցութիւնը:

Պոլսէն ծանօթ էր ինձի իր դիրահաղորդ և զուարթ հոգին: Տօնական զուարթախորհութեամբը լեցուցած էր տուներնիս: Այդ ատեններու [Յունիսի սկիզբները] տակաւին չէինք գիտեր առաջին կարաւանին վիճակուած բախտը, և անտեղեակ էինք տակաւին թուրքին եղեռնի կամքին:

Իսլամին ծոմապահութիւնը սկսած էր արդէն, և ծայր տուած եղեռնի ապերասանութիւնը:

Ջարդերու չարաշուք զրոյցներ սկսած էին մեր ականջը հասնիլ: Այդ միջոցներուն էր, որ օր մը, մեծ իրարանցումի մը մէջ տեսայ զինք:

Այն տեսակ խօսք մը տարածուած էր քսորականներուս մէջ, թէ մահմետականութիւնը ընդունողը ազատ պիտի արձակուէր:

Այդ ատենները, առաջին կարաւանը մեկնած էր արդէն և եօթանասուն հոգիի չափ մնացած էինք: Ամբողջ երկու օր, խեղճ աշխատեցաւ, համոզելու համար տկար հոգիները, որ մահը մահմետականացումէն աւելի աղէկ է, և զատ-զատ երդում ընել տուաւ բոլոր անոնց, որոնց հոգիի ուժին վրայ կասկած ունէր, թէ հաւատարիմ կը մնան իրենց լոյս-հաւատքին»:

**

Բայց ինչո՞ւ, մինչեւ այսօր, 24 Ապրիլ 1915-ի եղեռնի պատմութեան ամէնէն կարեւոր այս երկու վերապրող-ականատեսներուն վկայութիւններուն մասին չխօսուեցաւ:

Ինչո՞ւ. որովհետեւ 1915-ին Չանղըրը մէջ տկարացած հոգիներ ունեցող հայ մտաւորականներուն խնայել ուզեցին:

Այստեղ կը մէջբերենք, 17 Յունիս 2003-թ.ին, «Նայիրի»ի մէջ այս մասին մեր գրածներէն հատուած մը:

Ո՞վքեր էին 1919-թ.ին, Միքայէլ Շամտանճեանին մատնանշած Չանղըրը-ի այն քսորեալ մտաւորականները, որոնք մահմետականանալով կեանքերնին ազատել ուզած էին:

Ո՞վքեր էին 1922-թ.ին, Յովհան Վրդ. Կարապետեանին յիշատակած այն կարծեցեալ համբաւաւորները, «Որոնց համբաւին պատուանդանը կը գայթեր անդարձ»:

Միքայէլ Շամտանճեան խնայած էր այս տկարացած հոգիները՝ պատմութեան դատաստանին առջեւ, և չէր տուած անոնց անունները:

Յովհան Վրդ. Կարապետեանն ալ չէ տուած, այս տկարացած հոգիներուն անունները:

Բայց ան, իբր աւանդապահ հայ կրօնական՝ իր ընդվզումը յայտնած է հանդէպ այս տկարացած հոգիներուն, որոնք թէպէտ համբաւաւորներ էին,

և սակայն, աքսորականի փորձաքարին առջեւ, իրենց իսկական գոյնը դուրս տուած էին, որու հետեւանքով անոնց համբաւի պատուանդանը «Կը գայթեր անդարձ»:

Մենք այստեղ պիտի չուզէինք այդ մասին արտայայտուիլ, թէ՛ արդէօք ո՞վքեր կրնային ըլլալ Չանդըրը-ի աքսորեալներուն մէջէն այդ... երեւելիները, որոնց համբաւը կը «Գայթեր անդարձ»:

Բայց երբ տեսանք, թէ իսկական «Հերոս և տաղանդ» Ռուբէն Սեւակը Սփիւռքի մէջ դաշնակցականներուն կողմէ անտեսուած և մոռացութեան ենթարկուած էր, ու նաեւ, Հայաստանի մէջ ալ, նոյն կուսակցութեան ազդեցութեամբ, իր արժէքը նոյնպէս չէր գնահատուած, և տակաւին՝ ուրիշ Սեւակ մը մէջտեղ բերուած էր բոլորովին շուքի մէջ ձգելով իսկական Սեւակը՝ այդ օրէն ի վեր որոշեցինք պաշտպանել Ռուբէն Սեւակին սուրբ յիշատակը և ջանացինք իրականութիւնները բացայայտել:

ԿԵՂԾ ՀԵՐՈՍՆԵՐ ԵՒ ԻՍԿԱԿԱՆ
ՀԵՐՈՍՆԵՐ...

Ո՞ՎՔԵՐ ԷՒՆ ՉԱՆԴՐԸ-Ի
ԱԶՍՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ,

ՄԱՀՄԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՓՐԿՈՒԻԼ

ՈՒՋՈՂ «ՀԱՄԲԱԻԱՌՐ ՄԵԾԵՐ»Ը

... ԱՅՆ ՏԵՍԱԿ ԽՕՍԶ ՄԸ ՏԱՐԱԾՈՒԱԾ ԷՐ

ԱԶՍՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՄԷՋ, ԹԷ ՄԱՀՄԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԸՆԴՈՒՆՈՂԸ ԱԶԱՏ ՊԻՏԻ ԱՐՁԱԿՈՒԷՐ:

... ԽԵՂՃ ՍԵԻԱԿ, ԱՄԲՈՂՋ ԵՐԿՈՒ ՕՐ ԱԾԽԱՏԵՑԱԻ, ՀԱՍՈՋԵԼՈՒ

ՀԱՄԱՐ ՏԿԱՐ ՀՈԳԻՆԵՐԸ, ՈՐ ՄԱՀԸ ՄԱՀՄԵՏԱԿԱՆԱՅՈՒՄԷՆ

ԱԻԵԼԻ ԱՂԷԿ Է, ԵՒ ՋԱՏ-ՋԱՏ ԵՐԴՈՒՄ ԸՆԵԼ ՏՈՒԱԻ ԱՄԷՆ ԱՆՈՆՅ,

ՈՐՈՆՅ ՀՈԳԻՒ ՈՒԺԻՆ ՎՐԱՅ ԿԱՍԿԱԾ ՈՒՆԷՐ, ԹԷ՛ ՀԱԻԱՏԱՐԻՄ

ՊԻՏԻ ՄՆԱՆ ԻՐԵՆՅ ԼՈՅՍ-ՀԱԻԱՏՔԻՆ:

ՄԻՔԱՅԵԼ ՇԱՄՏԱՆՃԵԱՆ

«ՅՈՒՇԱՐՁԱՆ ԱՊՐԻԼ 24-Ի» - Կ. ՊՈԼԻՍ 1919

ԱԶՍՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՓՈՐՁԱՔԱՐ ՄԸՆ ԷՐ ԱՐԺԱՆԻՔՆԵՐՈՒ...

ԱՄԷՆ ԱՆՁ Ի ՅԱՅՏ ԿՈՒ ԳԱՐ ԻՍԿԱԿԱՆ ԻՐ ԳՈՅՆՈՎ: ՈՄԱՆՅ՝

ՀԱՄԲԱԻՆ ՊԱՏՈՒԱՆԴԱՆԸ ԿԸ ԳԱՅԹԷՐ ԱՆԲԱՐՁ, ՄԻՆՉ

ՈՒՐԻՇՆԵՐ ՆՈՐ ԿԸ ԿԵՐՏԷԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԸ ԱՌԻՆՔՆՈՂ ՀԻԱՅՄԱՆ:

ՅՈՎՀԱՆ Ծ. ՎՐԴ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

«ԷՋ ՄԸ ԱԶՍՈՐԱԿԱՆԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՍ»

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ» - 7 ՅՈՒՆՈՒԱՐ 1922-Ա.Մ.Ն.

*
*
*

Այո՛... խնայենք տկարացած հոգիներ ունեցող մտաւորականներուն անունները... որոնք նոյնպէս նահատակուեցան:

Բայց ինչո՞ւ...

Ինչո՞ւ արժանի՞ով չգնահատենք ինչո՞ւ չգնահատեցինք գերմարդկային կեցուածք ցուցաբերած Ռուբէն Սեւակը:

Այն Ռուբէն Սեւակը որ, եկեղեցական առաջնորդէ մը աւելի, մենք պիտի ըսէինք՝ առաջին քրիստոնեայ առաքեալներուն նման մահը արհամարհելով, իր հաւատքը պաշտպանած էր...:

*
*

* *

Մենք կրկին հպարտութեամբ պիտի ըսենք, որ մեր երիտասարդական տարիներէն ի վեր, Ռուբէն Սեւակի Սուրբ Յիշատակը, մեր բոլոր կարելիութիւններով, արժեւորելու աշխատեցանք...:

Ոչ թէ միայն անոր մեր հօրեղբայրը ըլլալուն համար...

Այլ՝ անոր համար որ Ռուբէն Սեւակին հայկականութեան ոգիին, անոր գաղափարականին խորապէս կը հաւատայինք... և դե՛ռ կը շարունակենք զայն դաւանիլ:

* *

1985-թ.ին, Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակին առթիւ, գիրք մը հրատարակեցինք...:

«ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ԵՒ ՓՐՅՈՒԵԼԻՔ ՈՒՂԵՂՆԵՐ» վերտառութեամբ:

26 տարիներ յետոյ, երբ այսօր կրկին կը կարդանք այս գիրքը, կը տեսնենք, թէ ան, մինչեւ այսօր, իր այժմէականութիւնը չէ կորսնցուցած. և Ռուբէն Սեւակը լաւ հասկնալու համար՝ ամէնէն կարելոր գիրքերէն մէկն է:

Այստեղ կը հրատարակենք այդ գրքին յառաջաբանը որ, մինչեւ այսօր, մեր «Հաւատամքն» է:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Գառնուկի պէս անգէն ցեղ մը ամէ՛ն օր կը յօշոտուի: Իսկ մեր գամբռերը խելօքցեր, փիլիսոփայացեր, քաղաքակրթուեր են, տիեզերական եղբայրակցութեան մը խօսքերը կ'ընեն մեզի, ու կ'երազեն այն հեռաւոր օրուան՝ ուր գայլ ու գառնուկ մէկտեղ կ'արածուին...»:

1911 - ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ – «ԱՅԼԱՍԵՐՈՒՄ»
«ԲԺԻՉԿԻՆ ԳԻՐՔԷՆ ՓՐԳՈՒԱԾ ԷԶԵՐ»-ու շարքէն:

* *

Երբ կը կարդանք հերոս-նահատակ, բանաստեղծ Ռուբէն Սեւակի վերի տողերը, իր մարգարէական նախատեսութիւնը մեր այն ատենուան առաջնորդներուն՝ թուրք և հայ եղբայրութեան վրայ յենող սխալ քաղաքականութեան մասին, մեր սրտի ցաւը կը կրկնապատկուի:

Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակի այս օրերուն, մենք կ'ողբանք անոր կանխահաս կորուստը:

Մենք կ'ողբանք Ռուբէն Սեւակի նահատակութեամբ, Հայ Ազգին կրած մեծ կորուստը: Եւ կ'ողբանք, այն ատենուան Հայ առաջնորդներուն սխալ քաղաքականութեան զոր գացած միլիոնաւոր Հայերու կորուստը:

70 տարիներ անցան այն սոսկալի թուականէն, որ Եղեռն կը կոչենք:

24 Ապրիլ 1915-ը միլիոնաւոր հայերու նահատակութեան տարեդարձն է, բայց միեւնոյն ատեն պատմութեան գիտցուած թուականներէն ի վեր իր Հայրենի հողերուն վրայ ապրող հայուն Հայրենիքին մեծ մասին գողցուելուն տարեդարձն է:

(→էջ 4)

TÜRKLERİN (SÖZDE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ

YASASIN DIYARBAKIR-IN
KURT BELEDİYE BASKANI
«1915-DE KATLEDİLEN ERMENİ
KARDESLERİMİN HATRASINA DIYARBAKIRDA
BİR ABİDE DİKİCEM VE DIYARBAKIRDAKI HARAP
VAZİYETTE OLAN BÜYÜK ERMENİ KİLİSESİNİ
RESTORE EDEREK İBADETE AÇICAM»

MAYIS 2011

DIYARBAKIR BELEDİYE BASKANI

ÇOK YASA DIYARBAKIR BELEDİYE BASKANI.

.... 1915-DE KATLEDİLEN ERMENİLERİN HATIRASINA BİR ABİDE DİKME VE BÜYÜK ERMENİ KİLİSESİNİ RESTORE EDEREK İBADETE AÇMA KARARINA CANDAN TESEKKÜRLER.....

* * *

BU ARADA DIYARBAKIR SEHİRİ İÇİN BAZI AÇIKLAMALAR YAPMAYI FAYDALI BULUYORUZ.....

DIYARBAKIR-IN İSMİ 1930 LARA KADAR DIYAR-I- BEKİR İDİ.

YANI BİR ARAP SÜLALESİNİN İSMİ OLAN «BEKİR-IN SEHİRİ».

MUSTAFA KEMAL-IN (SÖZDE) CUMHURİYET, GERÇEKTE İRKÇİ FASİST DEVRİNDE DIYARBAKIR-IN İSMİ SÖZDE TÜRKLESTİRİLDİ VE DIYARBAKIR-A ÇEVİRİLDİ.

HERHALDE CIVARDA BULUNAN ERGANİ BAKIR MADENLERİNE ADFEN.....

ERMENİLER DIYARBEKİR-E «DİKİRANAGERT» DERLER.....

M. E. 70 YILLARINDA ERMENİ KURALI BÜYÜK DİKİRAN ERMENİ İMPARATORLUGUNUN BAS SEHİRİ OLARAK YENİ BİR SEHİR İNÇA ETTİRMİŞ VE İSMİNİ «DİKİRANAGERT» KOYMUS.

ASLINDA DİKİRANAGERT BUGÜNKÜ DIYARBEKİRDEN EPEYİCE UZAKTA BİR KALE SEHİRİ - BU GÜNKÜ DIYARBEKİRLE ALAKASI YOK.....

1517 SENESİNDE OSMANLI SULTANI YAVUZ SELİM DİYARİ BEKİRİ ZAPTETTİ... O ZAMANLARA KADAR DIYARBEKİR-IN AHALİSİNİN BÜYÜK ÇOGUNLUGU ERMENİ VE SURYANI İDİ...

VE YAVUZ SELİM GÜNEYDEN KÜRT ASİRETLERİ GETİREREK DIYARBAKIRDAKI ERMENİLERİ VE SURYANILARI KÜRTLERİN İDARESİ ALTINA ALDIRDI.....

1915-E KADAR DIYARİBEKİRDE 150.000 (YUZ ELLİ BİN) ERMENİ YASİYORDU.....

BUGÜN DIYARBAKIRDAKI ERMENİLERİN SAYISI BİR KAÇ YÜZ CIVARINDA.

VE BUGÜN DIYARBAKIR - AHALİSİNİN BÜYÜK COGUNLUGU KÜRTLER VE KÜRTLER DIYARBAKIR-I GELECEKTEKİ BÜYÜK KURDİSTANIN BAS SEHİRİ YAPMAK İSTİYORLAR.

* * *

İSTE 1915-E KADAR BİR ERMENİ MEMLEKETİ OLAN DIYARİBEKİRİN VE ERMENİ AHALİSİNİN TRAJEDİSİNİN HİKAYESİ.

BU TRAJEDİ SEBEBİ İLE ERMENİ BAS SEHİRİ OLAN DİKİRANAGERT BÜGÜN KÜRT BASSEHRİNE ÇEVİRİLDİ.

8. 2.

ԱՌ Ի ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ... (Շար. էջ 3-էն)

Արեւմտեան պետութիւններու աղուէսային քաղաքականութեամբ առաջնորդուած վայրենի Թուրքին 100 տարուան պատրաստութեան արդիւնքն է 24 Ապրիլ 1915-ը: Եւ մենք տեւական կուլանք, որ Թուրքերը մեզի ջարդած են:

Բայց մենք ինչ ըրած ենք այդ 100 տարուան ընթացքին, որ չջարդուինք և մեր Հայրենի հողերուն վրայ Ազգ ըլլալով կարենանք գոյատեւել:

Ամէն ազգ իր ճակատագիրը իր ձեռքերով կը կերտէ, իր առաջնորդներուն ձեռքերովը:

24 Ապրիլ 1915-ի տանող վերջին 100 տարուան ընթացքին, Արեւմտեան Հայաստանի մեր առաջնորդները, մեծամասնութեամբ, ազգասիրութեան կեղծ դիմակին տակ, միայն և միայն, ծառայեցին Թուրքին, և Թուրքին ուժ տուող Արեւմտեան պետութիւններուն շահերուն:

Այս կեղծ ազգասէրներու շարքը կ'սկսի՝ Պէզճեան և Տատեաններու նման ամիրաներով, և աւելի ետք, իբր թէ Երոպայի ազատութեան գաղափարներով մէջտեղ ելլող Գրիգոր Օտեաններու խմբակով, կը շարունակուի Ներսէս Վարժապետեան և Օրմանեան պատրիարքներով, ու իր գազաթնակէտին կը հասնի, Գրիգոր Զօհրապի և նմաններուն ջատագոված՝ Թուրքին հետ եղբայրութեան քաղաքականութեամբ:

Այս բոլոր անձնաւորութիւններն ալ, երեւութապէս մեծ հայրենասէրներ էին և ազգին շահուն կը ծառայէին: Բայց բոլորն ալ հասարակաց գիծ մը ունէին՝ «Գործակցիլ Թուրքին հետ», «Ծառայել Թուրքին», մոռնալով որ Թուրքը գրաւող ուժն էր, որ գրաւած էր Հայուն Հայրենիքը:

Ինչպէս որ Օսմանցի Թուրքը ամէն կողմ թալանելով, մինչեւ Վիեննայի դռները գացած էր, և հոն, ժողովուրդներու միացեալ պայքարի ուժովը ետ մղուած, և անկէ ետք քայլ առ քայլ վռնտուած էր մինչեւ Պոլսոյ դռները. այնպէս ալ, Պոլսէն, Անաթօլիայէն և Հայաստանէն վռնտուիլը պէտք էր... վայրենի Թուրքին, մինչեւ իր որջը, 7 դարեր առաջ իր եկած տեղերը, Միջին Ասիոյ խորերը: Եւ Թուրքը իր հոգեվարքի այն տարիներուն, իրեն գործակից եղող Հայ Գուիզլիներ, Հայ Լավալներ, Հայ Բեթէններ գտաւ: Եւ մենք այս Հայ Գուիզլիները, Հայ Լավալները, Հայ Բեթէնները մինչեւ այսօր, Սփիւռքի մէջ, հայրենասէրներ կը կոչենք:

Այս Հայ առաջնորդները՝ Հայ և Թուրք եղբայրութիւն կը քարոզէին:

Բնական է՝ ամէնէն դիւրին ճամբան էր, առաջնորդի մը համար, գործակցիլ գրաւող ուժ եղող Թուրքին հետ, և անոր արտօնութեամբ ու թոյլատրած չափով հայրենասիրութիւն խաղալ, առանց զոհողութեան, առանց պայքարի, առանց արիւնցի, և ընդհակառակն՝ անձնական փառասիրութեան և

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԲԵՐՈՒՆ (ԻԲՐ ԹԷ) ՉԳԻՏՑԱԾ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**ՇԱՏ ԱՊՐԻ DIYARBAKIR ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ - Ի
ՔԻՒՐՏ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ**

«1915 - ԻՆ ՍՊԱՆՆՈՒԱԾ ՀԱՅ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՍ ՅԻՇԱՏԱԿԻՆ

DIYARBEEKIR ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ

ՅՈՒՇԱՐՁԱՆ ՄԸ ՊԻՏԻ ԿԱՆԳՆԵՄ:

ԵՒ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱԻԵՐԱԿ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ ԵՂՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ

ՄԵԾ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԻՏԻ ՎԵՐԱՆՈՐՈԳԵՄ

ԵՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՊԻՏԻ ԲԱՆԱՄ»:

ՄԱՅԻՍ 2011,

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Դո՛ւն, շատ ապրիս, Diyarbakir- Տիգրանակերտի քաղաքապետ:

1915-ին սպաննուած հայերուն յիշատակին յուշարձան մը հիմնելու և Diyarbakir Տիգրանակերտի հայկական մեծ եկեղեցին վերանորոգելու և պաշտամունքի բանալու որոշումդ սրտանց կը շնորհաւորենք:

★ ★ ★

Մինչ այդ՝ «Diyarbakir» քաղաքի մասին կարգ մը բացատրութիւններ տալը օգտակար կը նկատենք.....

Diyarbakir-ին անունը՝ մինչեւ 1930-թ.ները Diyaribekir էր:

Այսինքն՝ արաբական ազգատոհմի մը անունը եղող «BEKIR»-ին քաղաքը:

Մուսթաֆա քեմալին իբր թէ հանրապետութեան [իրականութեան մէջ ցեղապաշտ և ֆաշական վարչակարգին] շրջանին Diyaribekir-ին անունը իբր թէ թրքացուեցաւ և Diyarbakir-ի վերածուեցաւ:

Անպայման շրջակայքը գտնուող ERGANI-ի պղինձի հանքերուն վերագրելով.....

հայերը Diyaribekir-ին Տիգրանակերտ կը կոչեն.....

Ք.Ա. 70 թուականներուն հայոց Արքայ՝ Մեծն Տիգրան, հայկական կայսրութեան մայրաքաղաք ըլլալով նոր քաղաք մը կառուցել կուտայ: Եւ անունը «Տիգրանակերտ» կը կոչէ..... Իրականութեան մէջ՝ Տիգրանակերտը այսօրուան Diyaribekir-էն բաւական հեռու եղող բերդաքաղաք մըն է.....

Եւ այսօրուան Diyaribekir-ին հետ կապ չունի.....

1517-ին Օսմանեան Սուլթանը՝ Sultan Selim Diyarbekir-ը կը գրաւէ:

Մինչեւ այդ թուականը Diyaribekir-ի բնակչութեան մեծամասնութիւնը՝ հայեր և Ասորիներ էին:

Եւ Yavuz Selim հարաւի շրջակայքէն Քիրտ ցեղախումբեր բերել կուտայ: Եւ Diyarbekir-ի հայերը և Ասորիները քիրտերուն իշխանութեան կը յանձնէ.....

Մինչեւ 1915 թուականը Diyarbekir-ի մէջ, 150,000 [հարիւր յիսուն հազար] հայեր կ'ապրէին.....

Այսօր Diyarbakir-ի մէջ հայերուն թիւը քանի մը հարիւրի շուրջ է:

Եւ այսօր Diyarbakir-ին բնակչութեան մեծամասնութիւնը՝ Քիրտեր են....

Եկ քիրտերը Diyarbakir-ը՝ ապագայ մեծ Քիրտիստանին մայրաքաղաքը ընել ծրագրած են:

★ ★ ★

Ահաւասիկ՝ մինչեւ 1915-թ.ը հայկական քաղաք եղող Տիգրանակերտին և տեղւոյն հայ ժողովուրդին ողբերգութեան պատմութիւնը.....

Այս ողբերգութեան հետեւանքով է, որ հայկական մայրաքաղաք եղող Տիգրանակերտը՝ այսօր Քրտական մայրաքաղաքի վերածուեցաւ

անձնական շահերուն առաւելագոյնը վայելելով՝ Ամիրա ըլլալով, Փաշա ըլլալով, Վարչապետի Խորհրդական ըլլալով, Մէպուս ըլլալով, Նախարար ըլլալով:

Այս կեղծ ազգասիրութեամբ, այս ինքնախաբութեամբ մեր առաջնորդները հասան 24 Ապրիլ 1915-ի:

Միայն «Թուրքը մեզի ջարդեց» ըսելով լալը օգուտ չունի: «Ինչո՞ւ ջարդուեցանք»-այս մէկը հասկնալ պէտք է: Հիւանդութեան մը մինչեւ որ ախտաճանաչումը չըլլայ, անոր դարմանը չի գտնուիր: Եթէ հասկնանք «Անցեալը», «Ապագան» շահած կ'ըլլանք: Բաղաքականութեան առաջին պայմանը՝ թշնամին և բարեկամը ճանչնալու մէջ կը կայանայ:

«Ո՞վ էր հայուն թշնամին», «Ո՞վ էր Հայուն բարեկամը»:

Դարերով ո՞վ չարչարեց Հայ, Յոյն և Պալքանեան քրիստոնեայ ժողովուրդները: Եւ ո՞վ ազատեց Արեւելեան Հայաստանը, Յունաստանը և Պալքանեան քրիստոնեայ ժողովուրդները:

Այս պարզ իրականութիւնը տեսնելու համար մեծ քաղաքագէտ, մեծ դիւանագէտ ըլլալու պէտք չկար:

Բայց այս պարզ իրականութիւնը տեսնելու համար, շատ կարեւոր յատկանիշ մը պէտք էր՝ «Պատուաւոր ըլլալ», «Հոգին թշնամիին ծախած չըլլալ»: Առաջնորդ մը՝ հայրենասէ՞ր է, թէ հայրենադա՞ւ - ա՛յս է հարցը:

Այս գիրքին մէջ պիտի գտնէք հայու երկու տիպարներ: Մէկը՝ Պատրիարք, միւսը՝ Բանաստեղծ: Պատրիարքը՝ Թուրքին կողմէ մեռցուելու վախէն, հոգին կը ծախէ Թուրքին: Բանաստեղծը՝ հոգին չծախելու համար Թուրքին, ուզելով մեռնելու կ'երթայ:

Այս Գիրքը՝ կեղծ ազգասէր առաջնորդներուն պատճառ եղած մեծ աղէտին սրտի ցաւով է գրուած:

Այս Գիրքը՝ Սփիւռքի կեղծ ազգասէր առաջնորդներուն Մայր Հայրենիքին պատճառելիք վտանգներու մտահոգութեամբ է գրուած:

Մաղթենք, որ «Պատմութիւնը կրկնութիւն է» ըսուած կարգախօսը, Հայ Ազգին համար չիրականանայ:

Ալ կը բաւէ՛, Հայ Ազգին քաջած տառապանքը:

15 Ապրիլ 1985

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ


Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն


Ռուբեն Սեւակի գաղափարականը և անձնագործության ոգին հայ ժողովուրդին մեջ տարածելու նպատակաւ, NICE-ի «Ռուբեն Սեւակի Յիշատակի Տուն»ը 1915 թուականի Հայոց Ցեղասպանութեան 95-ամեակին ձօնուած չորս պատմական սկաւառակներ հրապարակած է:

Այս չորս տեսասկաւառակները սիրով կը նուիրուին՝ ունենալ փափաքող եկեղեցիներուն, մշակութային միութիւններուն, դպրոցներուն և միօրեայ վարժարաններուն:

Դիմումները ուղարկել հետեւեալ հասցէին՝

REVUE HEBDOMADAIRE «NAIRI»
B. O. BOX. 113-5186 BEYROUTH - LIBAN
Email: nairi2002@hotmail.com





Այս տեսերիզը կը ձօնուի նահատակ բանաստեղծ
Ռուբեն Սեւակի 125-ամեակին
Ռուբեն Սեւակի Յիշատակի Տան կողմէ:



Տ. Պ. Պ. Չիլիկյան

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ

1885 - 1915

Պկրուք, 23 Ապրիլ 1994

Հ.Կ.Մ.ի Սահակեան - Լ. Մկրտչեան Գուլճի մէջ

Նահատակ Բանաստեղծ Ռուբեն Սեւակի անուան
Մատենադարանի բացման հանդիսութիւն

Բարձր հովանաւորութեամբ
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կարողիկոսի
Սեօի Տանն Կիլիկիոյ

Բարերարութեամբ
Ռուբեն Սեւակի Յիշատակի Տան, Նիս (Ֆրանսա)

Տրամադրելի են հետեւեալ սկաւառակները.-

1.- DVD- 1985-թ.ին, Նիսի մէջ, Ռուբէն Սեւակի 110-ամեակի հանդիսութիւնը, Գախագահութեամբ՝ Անդրանիկ Ծառուկեանի:

2.- DVD- 1987-ին, Երեւանի հեռուստատեսիլէն Ռուբէն Սեւակի մասին յայտագիր, Ալեքսանդր և Անահիտ Թօփչեաններու կատարողութեամբ:

3.- DVD- 1994-թ.ին, Պէյրութի Սահակեան Գոլէճի մէջ, Ռուբէն Սեւակի անուան մատենադարանի բացման հանդիսութիւն, Բարձր Հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի, Մեծի Տանն Կիլիկիոյ :

4.- DVD- 2006-թ.ին, 91 տարիներէ ի վեր առաջին անգամ ըլլալով՝ Ուխտագնացութիւն դէպի Չանդըրը և Այաշ:



ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ [ԵՒ ԱՆՆԱԽԱԴԷՊ]

ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

ԹՈՒՐՔԻՈՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ

Թուրքիոյ ժամանակակից լրագրողներու Միութիւնը, սպանուած հայ գրողներու և լրագրողներու ցանկին վրայ աւելցուցած է հայկ. ցեղասպանութեան զոհ գացած 9 հայ գրողներու և հրապարակագիրներու անունները:

Անոնք են... Ռուբէն Սեւակ, Սիամանթօ, Գրիգոր Զօհրապ, Դանիէլ Վարուժան, Ռուբէն Զարդարեան, Արմէն Տորեան, Լեւոն Լարենց, Երուանդ Սրմափէշխանլեան և Յովհաննէս Յարութիւնեան:

Պոլսահայ և Թուրք լրագրական աղբիւրներ կը յայտնեն, որ այս անունները այսուհետեւ տեղ կը գրաւեն Թուրքիոյ մէջ սպաննուած լրագրողներու ցանկին վրայ:

Մինչ այդ՝ սպաննուած լրագրողներու ցանկին վրայ տեղ գտած էին 67 անուններ, որոնց շարքին էր նաեւ «ԱԿՕՍ» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիրը՝ Հրանդ Տինգ:



Վերոնշեալ թերթի գլխաւորներէն Ռոպեր Քոփթաշ, իր ստորագրութիւնը կրող յօդուածի մը մէջ հարց տուած էր, թէ՛ «Թուրքիոյ գրող-լրագրողներու միութիւնը ե՞րբ պիտի յիշէ 1915-ր.ին սպանուած հայ գրողներն ու հրապարակագիրները»: Եւ սրտցաւ դիտողութիւն մըն ալ ըրած է ըսելով... 1905-էն մինչեւ 2009 տարեթիւը, Թուրքիոյ մէջ սպանուած են աւելի քան 60 լրագրող-գրողներ, սակայն մոռացութեան տրուած էին մօտ և հեռու անցեալի 22 հայ լրագրող-հրապարակագիրները»:

«... Ցեղասպանութեան զոհ հայ գրողներուն վրայ նորերն ալ աւելցուելու են»- կ'ըսեն «Ժամանակակից Լրագրողներու Միութիւն»ի պատասխանատուները, զգացնելով, որ «Նոր էջ մը» բացուելու վրայ է Թուրքիոյ մէջ:

Ս Ա Ր Կ Ա Ի Ա Գ Ա Ց
Ձ Ե Ռ Ն Ա Դ Ր Ո Ի Թ Ի Ի Ն՝
Ա Ն Թ Ի Լ Ի Ա Ս Ի Մ Է Ձ

Ցառաջիկայ Կիրակի, 15 Մայիս 2011-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յընթացս սուրբ և անմահ պատարագի, տեղի պիտի ունենայ սարկաւազաց ձեռնադրութիւն, բարձր հովանաւորութեամբ՝

Ն . Ս . Օ . Տ . Տ .
Ա Ր Ա Մ՝ Ա . Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ի
Մեծի Տանն Կիլիկիոյ

Ձեռնադրութիւնը պիտի կատարէ
և քարոզէ՝
ԳԵՐՇ. Տ. ՆՈՐԱՅՐ ԵՊՍ. ԱՇԸԳԵԱՆ

Սարկաւազական կարգ պիտի ստանան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեվանքի Բ. ընծայարանի սաները՝ Սեբաստիա կիս. սրկ. Ղարախանեան, Համբարձում կիս. սրկ. Պալգեան և Անդրանիկ կիս. սրկ. Տալգընեան:

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու հոգեպարար արարողութեան և աղօթելու դպրեվանքի ընծայեալներուն համար հոգեւորական կեանքի խոնարհ աստիճանի ստացման առիթով:

ԴԻԻԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ


...ԵՒ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ
 ՈՂԻՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
 ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄ 17 ԷՋՆՈՑ ԳՐՈՒԹԻՒՆԸ՝
 ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՒ ԱՆԳԼԻՈՅ ԱՄԷՆԷՆ ԾԱՆՕԹ ԵՒ
 ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ
 ԳԾՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ
 2011-Թ.Ի ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԹԻՒՆ ՄԷՋ, ԱՆԳԼԵՐԷՆ
 ԼԵՋՈՒՈՎ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Այստեղ նախ կը հրատարակենք սոյն երկին առաջին էջին և կողքի էջին
 նկարները: Անոր 127-էն մինչեւ 143 երկարող էջերուն մէջ լոյս տեսած է
 թաներ Աքչամի գրութիւնը, հետեւեալ վերնագրով.

«THE CHILINGIRIAN MURDER: A CASE STUDY FROM THE 1915
 ROUNDUP OF ARMENIAN INTELLECTUALS»

TANER AKÇAM
 CLARK UNIVERSITY

ՀԱՅ ՄՏԱՌՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԶԸՐԱԾԸ՝ ԹՈՒՐԶ ՊԱՏՄԱԲԱՆ TANER AKÇAM ՅԱԶՈՂԵՑԱԻ ԿԱՏԱՐԵԼ



Holocaust and Genocide Studies

Volume 25 Number 1 Spring 2011

Articles

- Foot Soldiers of the Final Solution: The Trawniki Training Camp and Operation Reinhard** 1
Peter Black
- Before the Holocaust: Concentration Camp Lichtenburg and the Evolution of the Nazi Camp System** 100
Stefan Hördler
- The Chilingirian Murder: A Case Study from the 1915 Roundup of Armenian Intellectuals** 127
Taner Akcam
- Book Reviews** 144
- Recently Published Works in Holocaust and Genocide Studies** 176

UNITED STATES
MEMORIAL
**HOLOCAUST
MUSEUM**

www.hgs.oxfordjournals.org
ISBN 978-0-19-969622-2
ISSN 1476-7937 (Online)
ISSN 8756-6583 (Print)
\$21.00

OXFORD
UNIVERSITY PRESS

ԱՅՍ ՊԱՐԲԵՐԱԳԻՐԹԸ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ
ԱՆԳԼԻՈՅ ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ՝
OXFORD UNIVERSITY PRESS-ԻՆ

ԵՒ

UNITED STATES

HOLOCAUST MEMORIAL MUSEUM-ԻՆ

[ՀՐԷԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԸ] ԿՈՂՄԷ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
[ՎՐԷԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]

Կը հրատարակենք նաեւ Թանգեր Աքչամի գրութեան առաջին էջին 127 ու 129 էջերուն պատճենները.—

Scholarship on the destruction of the Armenian community of the Ottoman Empire has tended to focus on the genocide's broad historical, political and sociological aspects. The gradual opening of the Prime Ministerial Ottoman Archive in Istanbul has made it possible to shed light on micro-aspects of the planning and implementation of the Armenian Genocide. On the basis of documents and eyewitness accounts related to the murder of Dr. Rupen Sevag Chilingirian, the author provides important insight into the central authorities' involvement in the murder of Armenian intellectuals.¹

On June 22, 1915, Ottoman authorities arrested Dr. Rupen Sevag Chilingirian, an Armenian physician and poet, as part of an ongoing roundup of Armenian intellectuals. They sent him first to Chankiri (Çankiri), a town in Kastamonu Province. On August 26 they sent him from Chankiri towards Ankara, but during the journey, somewhere outside the village of Kalecik, Chilingirian and other detainees were tortured and murdered.² Records preserved in the Ottoman archives—especially those of the Ministry of the Interior— as well as Armenian accounts reveal that officials of the ruling Committee of Union and Progress (CUP) at the most senior levels of government took an active interest in the murder of Chilingirian and other Armenian intellectuals. The documents strongly suggest that the central authorities not only were fully aware of the murders, but also participated in planning them. In a rare case in which well-meaning local officials caught and prosecuted the assassins, higher officials intervened to obtain their release.

The murders took place in the context of the extensive crackdown on the Ottoman Armenian elite that, began with the empire's entrance into the First World War. The Ottoman-Turkish nationalist party in power at the time, the CUP, had seized control in 1908 during the bloodless «Young Turk» revolution. In the initial phase of its rule, the CUP aimed to enact a policy of Ittihad-i Anasir, or «Union of the peoples, unity of all subjects of the Ottoman Empire». But because of the difficulties it faced in this endeavor, the regime soon had to scale back on the policy, abandoning it completely after the Balkan wars of 1912-1913.



Rupen Sevag Chilingirian in Ottoman uniform as a medical lieutenant (early 1915). Courtesy of Hovhannes Chilingirian.

The authorities brought no charges-either at the time of the arrest or after the doctor's arrival in Chankiri- and initiated no investigation. As soon as her husband was taken. Mrs Chilingirian contacted her parents in Switzerland. We know from Chilingirian's letters of July 6 and 13,⁷ as well as from an August 26 letter from his father-in-law, Franz Apell-Dörr, to the German Embassy, that Mrs. Chilingirian's mother, Marie Apell, left Switzerland as soon as she learned of her son-in-law's arrest and arrived in Istanbul on June 26.⁸

Immediately after the arrest, Chilingirian's family contacted the German Embassy and Consular Office in Istanbul. They discussed the situation with Johann Mordtmann, the consul for Armenian affairs, and Field Marshal Colmar von der Goltz, a German advisor to the Ottoman Army.⁹ According to Marie Apell's account, Ottoman officials had promised von der Goltz that Chilingirian would be released to German authorities in exchange for a guarantee that he remain in Germany for the duration of the war. In a July 26 letter to the embassy in Istanbul, H. Filsinger, the German consul general in Lausanne, requested that in view of Mr. Apell-Dörr's reputation as a «well respected, patriotic person» and «a veteran of the 1870-1871 wars,» all necessary assistance should be extended to the family in their effort to rescue their son-in-law. Filsinger added that the family was prepared to provide any guarantee necessary to secure Chilingirian's release to German authorities.¹⁰

(The Chilingirian Murder, A Case Study from the 1915 Roundup of Armenian intellectuals.)

Մենք՝ Թաներ Աքչամ-ի մասին և անոր 2008-թ.ին հրատարակած՝ «ARMENI MESELESI HALLOLUNMUSTUR» վերտառութեամբ գիրքին մէջ, Ռուբէն Սեւակի սպանութեան մասին կատարած շատ կարեւոր յայտնութիւններ բովանդակելուն համար, «Նայիրի»ի թիւ 286-ի [22 Ապրիլ 2008] մէջ, լայն մանրամասնութեամբ արտայայտուած էինք:

Այստեղ օգտակար կը նկատենք, իբր բացատրական՝ այս գրութենէն հատուած մը հրատարակելը.-

1995-թ.ին, «Նայիրի»ի առաջին թիւերէն սկսեալ Ռուբէն Սեւակի մասին, անոր ստեղծագործութեան, անոր գաղափարականին, անոր կեանքին և նահատակութեան մասին՝ իբր Ռուբէն Սեւակի եղբորորդին, իբր խղճի պարտք, մեր գիտցածները և լսածները ջանացինք հրապարակել:

Բայց միշտ յոյս ունէինք, որ Ռուբէն Սեւակի մասին նոր տուեալներ, (→ 9)

ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԶԸՐԱԾԸ... (Շար. էջ 2-էն)

նոր գրութիւններ, նոր փաստաթուղթեր կրնան գտնուիլ:

Եւ մեր այս յոյսը վերջերս իրականացաւ:

Քանի մը ամիսներ առաջ էր՝ Նիւ Եորքէն Փրօֆ. Վահագն Տատրեան հեռաձայնեց և ըսաւ, թէ իր բարեկամը՝ թուրք Փրօֆ. Taner Akçam-ը թրքական արխիւներէն Ռուբէն Սեւակի սպանութեան և Ռուբէն Սեւակը սպաննող ոճրագործներուն մասին նոր փաստաթուղթեր գտած է:

Եւ Փրօֆ. Վահագն Տատրեան մեզի տուաւ Minnesota-ի (USA) համալսարանը պատմագէտի ամպիոն ունեցող Փրօֆ. Taner Akçam-ի հեռախօսի համարը, և մենք հեռաձայնեցինք անոր, շնորհաւորեցինք ու շնորհակալութիւն յայտնեցինք Ռուբէն Սեւակի մասին կատարած նոր յայտնագործութեան համար:

Եւ Թանէր Աքչամ մեզի հետեւեալ տեղեկութիւնները տուաւ.

«Հայկական թերթերուն մէջ գրուած է, թէ Ռուբէն Սեւակը և իր չորս բախտակիցները սպաննող «Զիւրտ Ալօ»ն և միւս ոճրագործները, Չանղըրը-ի զինուորական հրամանատար Մէհմէտ Իզզէթ-ի կողմէ Tüney գիւղի մօտերը ծերբակալուած և Չանղըրը տարուած են և հոն, նոյն զինուորական հրամանատար Մէհմէտ Իզզէթ-ը, այս բոլոր ոճրագործները սպաննել տուած է:

Հայկական թերթերուն մէջ տրուած այս տեղեկութիւնները իրականութեան չեն համապատասխաներ:

Որովհետեւ թրքական արխիւներուն մէջ իմ գտած փաստաթուղթերս կ'ապացուցանեն, որ Զիւրտ Ալօ և միւս ոճրագործները Չանղըրը-ի բանտէն Պոլիս՝ Թալաթ Փաշային աղերսագիր դրկած են: Եւ Թալաթ Փաշան մասնաւոր հրամանագիրով Զիւրտ Ալօն և միւս ոճրագործները ազատ արձակել տուած է:

Ես, մօտ ատենէն, այս ողբալի դէպքերուն մասին գիրք մը պիտի հրատարակեմ, որուն մէջ պիտի գտնէք այս մասին բոլոր տեղեկութիւնները»:

Քանի մը օրեր առաջ վերջապէս, Պոլիսէն ստացանք Թանէր Աքչամ-ի հրատարակած այս գիրքը:

Եւ այս գիրքին մէջ նշուած գտանք Փրօֆ.ին ըսած բոլոր ցաւալի իրադարձութիւնները:

Այս գիրքին վերնագիրն անգամ ինքնին շատ տպաւորիչ է-

“ERMENI MESELESI HALLOLUNMUSTUR”

[ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ՝ ԿԱՐԳԱԴՐՈՒԱԾ Է]

Շատ ծանօթ եղելութիւն է, թէ ցեղասպան Թալաթը 1915-ի Եղեռնէն քանի մը ամիսներ յետոյ, գոռոզաբար յոխորտացած էր.

«ՍՈՒԼԹԱՆՆԵՐԸ ԴԱՐԵՐՈՎ ԶԿՐՅԱՆ ԿԱՐԳԱԴՐԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ: ԵՍ, ՀԱՅԿԱՆ ՀԱՐՅԸ, ԶԱՆԻ ՄԸ ԱՄՍՈՒԱՆ ՄԷՋ ԿԱՐԳԱԴՐԵԾԻ»:

Թանէր Աքչամի գիրքին վերնագիրը, Թալաթ-ի այս գոռոզ խօսքերուն ակնարկութիւն և վկայութիւն է:

Այստեղ կը հրատարակենք՝

1.- Պէյրուս 1960-ին լոյս տեսած, Կարօ Գէորգեանի «Ամէնուն Տարեցոյցը»-ին մէջ հրատարակուած՝ «ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԵՒ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆՑ ՎՐԻԺԱՌՈՒՆ ՄԷՀՄԷՏ ԻԶԶԷԹ ՊԷՅ» վերնագրով գրութիւնը:

2.- ԹԱՆԷՐ ԱԶՉԱՄԻ Յունուար 2008-ին Պոլիս հրատարակուած «Ermeni Meselesi Hallolunmustur» վերնագրով գիրքին առաջին էջին նկարը, ու նաեւ այս գիրքին մէջ Ռուբէն Սեւակի սպանութեան, ոճրագործներուն և Թալաթ փաշայի մասին փաստաթուղթերով տրուած զգայացունց տեղեկութիւնները...

ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ - ԿԱՐՕ ԳԵՈՐԳԵԱՆ, ՊԷՅՐՈՒՍ 1960, ԷՋ 223

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԵՒ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ

ՍՊԱՆՈՒԹԵԱՆՑ ՎՐԻԺԱՌՈՒՆ ՄԷՀՄԷՏ ԻԶԶԷԹ ՊԷՅ

Տարեգրքիս անցեալ տարուան Հատորով Հրատարակեցինք Արամ Անտոնեանի յուշերը, Դանիէլ Վարուժանի, Ռուբէն Սեւակի և նոյնքան դժբախտ իրենց երեք ընկերներուն վայրագ սպանութեանց մասին (էջ 134-137): Արամ Անտոնեան, իր այս յուշերուն մէջ, երախտագիտական տողերով արձանագրած էր վերաբերումը Չանդըրի զինուորական Հրամանատար և զինուորագրութեան ճիւղին պետ Մէհմէտ Իզզէթ Պէյի, որ «Նախախնամութիւն մը եղած էր բոլոր աքսորականներուն Համար և պատուոյ խնդիր դարձնելով իրեն Համար՝ գործուած ոճիրը, ամբողջովին բնաջինջ ըրաւ Քիւրտ Ալօն և անոր Հրամաններուն տակ գտնուող Հրոսախումբը»:

- «Պարագաները այնպէս բերին, որ ամենազարհուրելի պայմաններու տակ գործուած այս ոճիրը անպատիժ չմնայ, - կը գրէր Ա. Անտոնեան: - Թուրք սպայ մը՝ Մէհմէտ Իզզէթ պէյ պատուոյ խօսք տուած էր Տօքթ. Ռ. Զիլինկիրեանին, թէ ողջ-առողջ պիտի Հասնի Պոլիս և թէ, որեւէ վտանգ չկայ ոչ իրեն և ոչ ալ իր ընկերներուն Համար: Եւ սակայն, Հակառակ Իզզէթ պէյի խոստումին, սպանութիւնները գործուեցան: Իզզէթ պէյ, այս եղածը լսելուն պէս կատղած է: Անմիջապէս Հեագիր մը կը ղրկէ Գասթէմունի Ռէշիտ փաշային, բողոքելով եղածին դէմ և աւելցնելով, որ «Զինուորական պատիւս ոտնակոխեցիք»: Իզզէթ պէյ չբաւականացաւ այս եղածով, այլ ինք անձամբ գնաց Թիւնէյ, քննութիւն կատարեց և իրեն Համար պատուոյ խնդիր մը դարձուց ոչ միայն ոճրագործներուն, այլեւ անոնց ընկերներուն բնաջինջումը: Այս գործը գլուխ Հանեց ան անողորմաբար, Հետապնդելով և սպաննելով բոլորն ալ, անոնց պետէն մինչեւ յետինը մեղսակիցներուն, և ասիկա՝ տաքը տաքին, շատ կարճ ատենուան մը մէջ»:

Կը վերատպենք այս քանի մը տողերը Հրատարակութեանը առթիւ Մէհմէտ Իզզէթ պէյի լուսանկարին, որ մեր ձեռքն անցաւ, անցեալ տարուան Հատորի պատրաստութենէն յետոյ: Կ'արժէր տեղ տալ ատոր, ըսելու Համար նաեւ, որ Իզզէթ պէյ եղաւ մէկը այն Հազուագիւտ թուրք պաշտօնատարներէն, որոնք չկրցան իրենց մէջ խեղդել մարդասիրական զգացումները և իրենց կեանքն ու դիրքերը վտանգելու գնով, օգնեցին մահապարտ



Մէհմէտ Իզզէթ պէյ «Վրիժառու» թուրք սպայ

բազմութիւններուն:

Նկարին տակը, նոյն ինքն՝ Իզզէթ պէյի ձեռքով գրուած է. — «Քանզըրը ախզը ասքէր շիւպէսինին տէօրտիւնճի պէօլիւք քոմանտանը միւլազիմ էվվէլ Մէհմէտ Իզզէթ էֆէնտի» [Չանզըրը զինուորագրութեան ճիւղին չորրորդ վաշտի հրամանատարը՝ Ա. տեղակալ Մէհմէտ Իզզէթ էֆէնտի]:

Փրօֆ. Թանէր Աքչամ իր “Ermeni meselesi hallolunmustur”- «Հայկական հարցը կարգադրուած է» վերնագիրով գիրքին մէջ հրատարակած այս փաստաթուղթերը, թէ՛ Ռուբէն Սեւակի սպանութեան և թէ՛ Հայ Ազգի ցեղասպանութեան համար բացառիկ կարեւորութիւն ունին:

Այս գիրքին մէջ Թանէր Աքչամ փաստաթուղթերով կ’ապացուցանէ, թէ Թալաթ փաշա անձամբ ծրագրած և գործադրել տուած է Ռուբէն Սեւակի սպանութիւնը՝ Չանզըրը-ի Իթթիհատ Վէ Թերաքքի կուսակցութեան պատասխանատու Gemal Oguz-ի գլխավորութեամբ:

Եւ սպանութեան գործադրուելէն յետոյ ալ, նոյն ինքն՝ Թալաթ, անձամբ ղրկած (Chifre-ով) ծածկագիր հեռագիրներով, ազատ արձակել տուած է ոճրագործները:

Մենք կ’ուզենք հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել Փրօֆ. Թանէր Աքչամին՝ Ռուբէն Սեւակի սպանութեան և հայկական ցեղասպանութեան շուրջ մինչեւ հիմա գաղտնի մնացած եղելութիւն ու մանրամասներ լուսաբանող իր այս բացառիկ յայտնագործութիւններուն համար:

Մեր գրութեան սկիզբը նզոված էինք հայ դաւաճանները և Ազգին վնասարարները, որոնք հայկական ցեղասպանութեան պատճառ կամ գիտակցաբար թէ՛ ակամայ մեղսակից եղան և այս ցեղասպանութեան հետեւանքով ալ մեր հայրենիքին 90 առ հարիւրը կորսնցուցինք:

Այսօր, մեծ եղեռնին 93-րդ տարելիցն է:

Հայ ժողովուրդը 24 Ապրիլ 2008-ին կրկին պիտի յիշատակէ մեր անպատիժ մնացած ցեղասպանութիւնը:


Ինչպէ՞ս չնզովել անոնց, որոնք գործեցին հայկական ցեղասպանութիւնը, ազգասպանները որոնք ցարդ չեն պատժուած, անոնք որ մեղսակից եղան եղեռնագործութեան բայց, մինչեւ այսօր, անոնցմէ հաշիւ չէ պահանջուած, և ոչ ալ Ազգին բռնախլուած իրաւունքները վերադարձուած են հայութեան:

Եւ հայ ազգը մինչեւ այսօր դեռ կ’աշխատի և կը պաղատի, որ հայկական ցեղասպանութիւնը ընդհանուր ճանաչում գտնէ:

Այդ պատճառաւ կրկին պիտի հառաչենք՝ Երանի՛, թէ Արդարութեան ձեռքը անցեալ և նորեկ դաւաճանները և պատասխանատուները պատժէ:

8 Ապրիլ 2008 թուակիր «Նայիրի»ի մէջ գրուած էր թէ՛ «...Եւ ժամանակը պիտի գայ և Ռուբէն Սեւակին իրական արժէքը պիտի գնահատուի»:

«Նայիրի»ի –թիւ 286, 22 Ապրիլ 2008



**

Մենք Թաներ Աքչամի կողմէ 2008-թ.ին, Ռուբէն Սեւակի սպանութեան մասին կատարուած յայտնութիւններուն մասին, «Նայիրի»ի մէջ արտայայտուեցանք:

Եւ նաեւ, անցեալ Մայիս 2009-թ.ին, Հայաստան մեր կատարած այցելութեան օրերուն, Երեւանի Թէքէեան Մշակութային Միութեան սրահին մէջ, Ռուբէն Սեւակի յիշատակին կատարուած հանդիսութեան, ելոյթ մը ունեցանք և Թաներ Աքչամի «ERMENI MESELESI HALLOLUNMUSTUR» գիրքը ցոյց տուինք: Եւ բացատրութիւններ տուինք անոր մասին.....

Այս ելոյթը նոյնպէս՝ 2009-թ.ին, «Նայիրի»ի մէջ հրատարակուեցաւ:

